



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թ Ի Ի 6

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՍԻԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ԿԻՍՏ Զ.

18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1874



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՄԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ.

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. (առ օրին կարգևալ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդունելութիւն և անձնագրութեան.
2. Վաւերացում և որոշումներ և քրտնախնայ.
3. Ամբողջացում մայր դիմանքի.
4. Կազմութիւն և անձնակազմի դիմանք.
5. Ամբողջացում Գաղափարական ժողովոյ :

Ժողովոյն բացման ժամն անցած եւ Ատե-
նապետներէն ոչ ոք ներկայացած ըլլալով, Սրբ-
բաղան Նախագահին եւ երեսփոխանաց հրա-
ւիրմամբ Մէրեւէմ-Գուլի Յարութիւն էֆ. առօր-
եայ ատենապետութեան պաշտօնը կ'ընդունի
եւ կը բանայ Ատենան ժամ 7 1/2 ին ի ներկա-
լութեան 57 երեսփոխանաց, որոց թիւը հե-
տըզհետէ բաղմանալով 48 ի հասաւ :

Ատենապետ էֆ. անմիջապէս Օրակարգին
անցնելով առաջին խնդիր նախընթաց ատենագ-
րութեան ընդունելութիւնն ըլլալը յայտնելէ
ետեւ, կը յաւելցնէ թէ նախընթաց նիստին
ատենագրութիւնը՝ յորում ինքն առօրեայ ատե-
նագրութիւն պաշտօն վարած էր, չկարենալով ազ-

գային ուրիշ ստիպողական զբաղմանց, այն է
Սովելոց յանձնաժողովոյ գործերուն պատճա-
ռաւ ժամանակին աչքէ անցնել, տպագրու-
թեան հասած չէ եւ այս պատճառաւ երեսփո-
խանաց հաղորդուած չըլլալով հարկ կըլլայ ըստ
կանոնագրութեան յատենի ժողովոյ ընթեանու-

ՄԱԶԼԸՄԵԱՆ Թ. ԷՖ. — Նախընթացէն յա-
ռաջ ուրիշ խել մը նիստերու ատենագրութիւնը
առանց ընդունելութեան դեռ կը մնան. անոնք
չ'ընդունուած ինչպէս վերջին նիստի ատե-
նագրութիւն կրնայ ընդունուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երաւացի դիտողութիւն
մ'է այդ, զոր կրնաք միշտ իբր խնդիր յատաջ

դնել . բայց ես այժմ իմ առօրեայ պաշտօնովս Օրակարգին հետեւիլ պարտաւոր եմ :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԱԾ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ատենադրութիւնը կարգացուելէն ետեւ Ատենապետ էֆ. կը հրաւիրէ զերեսփոխանս՝ որ զխոզութիւն եթէ ունին՝ ընեն :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Թէ՛ իմ խօսքերուս եւ թէ՛ Ատենապետ պէյի խօսքերուն մէջ պակասներ կան, զորս կուզեմ լրացնել : Երբ ես յայտնեցի թէ բնաւորութեանս մէջ չկայ եւ դիտաւորութիւն չունիմ ուրիշները վշտացնելու, Սրբազան Նախագահ միջանկեալ կերպիւ բարեհաճեցաւ վկայել իմ այս խօսքիս եւ ես ալ շնորհակալութիւն յայտնեցի Նորին Սրբազանութեան թէ լաւ դադար ունեցած է իմ վրայ : Ատենապետ Պէյի խօսքերուս գալով կան այնպիսի կէտեր որ արձանագրուած չեն . որոնք կը յայտնէին թէ ո՞րչափ կրիւք լցուած էր ինձ դէմ : Այն բառերէն՝ որոնք պակաս են, յիշածներս կրնամ մէջ բերել :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — (ԸՆԴՈՒՆԵԼ) . Գիտողութիւններ չեն ատոնք, այլ նոր ճառեր :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — (ԸՆԴՈՒՆԵԼ) . Ատենապետ Պէյն այն օրն ըսաւ թէ գառնուկի պէս հեղ եմ ըսած լինիմ . ես այնպիսի բան մը չէի ըսած եւ չպատասխանեցի այս մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (ԸՆԴՈՒՆԵԼ) . Ներեցէք Իփէկճեան էֆ. ձեր խօսքն ընդմիջելու : Շատ անգամ անպիտի խօսքեր տեղի կուսենան, որք կարեւորութիւն չունենալով հարկ չըլլար ատենադրութեան մէջ անցնել, եւ հնարին ալ չէ որ սղագրութիւն չեղած ատեն ամեն բանական մանրամասնութիւն կարենայ ամփոփուելի արձանագրութեան մէջ : Ուստի կաղաչեմ որ չափէն աւելի չպահանջէք :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — (ԸՆԴՈՒՆԵԼ) . Քանի որ պակասներ կան եւ իմ միտքս են, կը յիշատակեմ որ նշանակուին . ինչպէս ուրիշներն ալ կրնան յիշատակել : Ատենադրութեանէն այնպէս կերեւայ թէ Ատենապետ պէյ շատ քաղաքավար կերպով խօսած է ինձ հետ . բայց այնպէս չէ . վերջերք մինչեւ իսկ լեզակի դէմ :

քով խօսեցաւ ինձ հետ, բայց ես չուզեցի պատասխանել : Կ'ըսէք թէ կարեւորութիւն չունին ատոնք . բայց Ատենապետ պէյի բերնէն Ուրիշներն սպանալիք մ'ալ սպրդեր է իմ մեկնելէս ետեւ, որ պէտք չէր արձանագրուած ըլլալ . բայց արձանագրուեր է . եթէ աւելորդ խօսքեր վերցնել հարկ լինէր, այդ խօսքն վերցնելու էր, զոր ըսեր է երեսփոխանի մը երթալէն ետեւ :

ՍՐԲԱՉԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԾ. — Ոստիկանութեան խօսքն որ սպրդուած է կ'ըսէք՝ Ատենապետ պէյի բերնէն, ես չը լսեցի : Ստոյգ է որ ես Իփէկճեան էֆ. ի համար վկայեցի թէ իր բնաւորութեան մէջ չկայ որ եւ է մէկը վշտացնել, եւ այս վկայութիւնս կրնայ արձանագրուիլ :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Գուք, Սրբազան Հայր, չլսեցիք . բայց ուրիշներ լսած են եւ ատենադրութեան մէջ ալ անցած է . այդ նախատական սպանալիքն ինձ կ'ակնարկէ թէ եւ, սակայն կրնայ օր մը ուրիշներուն համար ալ ըլլալ . չեմ գիտեր թէ ականջալուր եղող երեսփոխանք բողոքած են մի . ատենադրութեան մէջ բան մը չէ նշանակուած այս մասին : Ատենապետ պէյն եթէ այսօր ներկայ ըլլար՝ թերեւս յուզման միջոցին բերնէն փախած այդ խօսքը յետս կը կոչէր . բայց քանի որ ներկայ չէ, ես կ'առաջարկեմ որ ժողովին որոշմամբ այդ մասն ատենադրութեան մէջէն ջնջուի իբր ժողովին անպատուութիւն բերող կէտ մը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովին նոր ընդունած կանոնադրութիւնը կը տրամադրէ օրեւէ առաջարկութիւն գրով հաղորդել Գիւանին, եւ ատենադրութեան մասին զիմողութիւնք անձիշդ կէտերու վրայ միայն անփոփել : Ուրիշ գիտողութիւն ընող կայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իփէկճեան էֆ. կը բողոքէ թէ Ատենապետ պէյ սպանալիք մը բերնէն փախուցեր է իրեն դէմ, եւ կառաջարկէ որ այդ խօսքը ջնջուի ատենադրութեան մէջէն : Սրբազան Նախագահն այդպիսի խօսք մը լսած չըլլալը յայտնեց . թէ եւ ես ալ չլսեցի Ատենապետ պէյի բերնէն այդպիսի խօսք մ'ընելն . բայց քանի որ ատենադրութեան մէջ կայ, ըսել է թէ կամ եղեր է այդպիսի

խօսք մը, եւ կամ թէ որ չէ եղած, ատենագրութիւնը սխալ է . նախ այս կէտը պէտք է պարզել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտել կուտամ որ Իթիւճեան էֆ. ին ուզածը կարելի չէ գործարել . կրնայ պատահիլ որ եղած խօսք մը երկու մարդ միայն լսեն եւ քսան մարդ զայն լսած չլինին . ասով միթէ խօսքը չըսուած կըլլայ : Ես ալ կը փափաքէի որ Ատենապետ պէյն այսօր ներկայ լինէր եւ յուզման մէջ արտասանած այդ խօսքին համար գոհացուցիչ բացատրութիւն տար . բայց արդի պարագայիս մէջ ասկից անդին անցնիլ, անկարելին պահանջել է : Հիմա թէ որ ուրիշ զիտողութիւն ունեցող չը մնաց, ատենագրութիւնն ընդունելութեան պիտի դնեմ ըստ նոր կանոնադրութեան . բայց անկից յառաջ պէտք է յայտնեմ թէ ատենագրութիւնը խմբագրուելէ ետեւ Ատենապետ պէյին ներկայացած չըլլալով՝ իր խօսքերուն մէջ թեթեւ սրբագրութեան կարօտ կէտեր գտնուիլը շատ հաւանական է . վասն զի ինչպէս ի սկզբան յայտարարեցի, ես իբր առօրեայ ատենագիր նախորդ ժողովոյ՝ շատ ուշ կրցի ատենագրութիւնն աչքէ անցնել, եւ թէպէտ իրեն զրկեցի, բայց զինքը չգտնելուն պատճառաւ ետ բերած էին :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Կարծեմ ժողովը դեռ մեծամասնութիւն չունի, եւ Սահմանադրութեան կը հակառակի առանց մեծամասնութեան ատենագրութիւն վաւերացնել : Կը յիշեցնեմ որ նոր կանոնագիրն ընդունած օրերնիս որոշուեցաւ նաեւ որ կանոնագիրն այն կէտերն որ Սահմանադրութեան կը հակառակին, նախ պիտի վերաքննուին եւ ապա պիտի գործադրուին : Ուստի ատենագրութիւնն ընդունելութեան դրուելէ առաջ այս մասին ժողովին կամքը հարցնել կառաջարկեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանը Սահմանադրութեան մէջ կանոնադրութեան հակառակ արամագրութիւն մը չտեսներ այդ մասին, ուստի եւ քուէի կը դնէ նախորդ նստի ատենագրութիւնն՝ եթէ անոր վրայ զիտողութիւն ընող չէ մնացած :

ՊԷԿԵԱՆ ԷՖ. եթէ առաջարկութիւն մ'ունի կրնայ զայն գրաւոր ներկայացնել :

ՆԱԽԱՐԱՐԱԾ ՍՐԲԱՉԱՆ. — Նախորդ նիստին Քաղաքացիական օսվելոց համար հեռագիր մը եկաւ եւ ընդհ. ժողովոյ մէջ կարգացուելէ ետեւ յանձնաժողով մը դրուեցաւ, որ չէ յիշուած ատենագրութեան մէջ : Այս յանձնաժողովն անմիջապէս հանդանակութեան ձեռնարկեց եւ երկու օրուան մէջ մեծ մասն իր մէջէն ըլլալով հազար լիրայէն աւելի ստակ հաւաքեց, որուն համար արժան է որ ժողովը նորհակալութիւն յայտնէ :

Ժողովը մեծաւ գոհունակութեամբ խմացաւ Սովելոց յանձնաժողովոյ անդամոց անձուէր եւ արդիւնաշատ գործը, եւ Գիւանը յանուն ժողովոյն շնորհակալութիւն յայտնեց : Սովելոց յանձնաժողովոյ ազգասիրական ջանից համար՝ ատենագրութեան մէջ յատկապէս արձանագրուելու որոշմամբ :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Կը կրկնեմ առջի առաջարկութիւնս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը կրկնեմ թէ Գիւանը խուզարկեց Սահմանադրութեան մէջ եւ ձեր զիտողութիւնը հաստատող տրամադրութիւն մը չգտաւ, եւ թէ դուք ազատ էք առաջարկութիւն մ'եթէ ունիք, գրով ներկայացնելու . մանաւանդ արդէն երկու անգամ խօսեցաք այս մասին եւ ձեր իրաւունքը վայելեցէք :

Ատենապետ էփէնտի քուէի կը դնէ նախընթաց նիստին ատենագրութիւնը, որ միաձայն հաւանութեամբ կրնգոնուի :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Կաղաչեմ որ իմ բողոքս արձանագրուի թէ նախորդ որոշում մը եղծեց ժողովը այսօր :

ՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. — Սրբազան Նախագահ Սովելոց յանձնաժողովին համար շնորհակալութիւն առաջարկեց . ես ալ շնորհակալութիւն կառաջարկեմ Ռուսիսեան էֆ. ի համար, որ ժողովին ներքին կանոնագիրը խըմբագրեց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիմա կարգը պիտի դայ անոր . զիւանն արդէն մտադիր է այդ շնորհակալութիւնն առաջարկել բայց նախ կը յայտնէ թէ, Օրակարգին մէջ թէ եւ նորընէր երէտիւնց շնորհակալ յայ . սակայն ըստ կանոն

նադրութեան նորընտիր երեսփոխանաց հաճութիւնը դեռ առնուած չըլլալով, այս մասին տեղեկագիր չէ բերուած Գիւանին, ուստի կարգը Մայր դիւանի ամբողջացման խնդրոյն է, որուն պիտի ձեռնարկէ ժողովն, ըստ նոր կանոնադրութեան. բայց Գիւանը նախապէս չընորհակալութիւն կառավարիչ ժողովոյն, անոր խմբագրին Մեծ Թուսինեան էֆ. ին համար, որ մեծ խնամով աշխատասիրած է այս կարեւոր գործը. եւ որուն ապագայ արդիւնաւորութեանը վրայ քաջայոյս է Գիւանը:

Ժողովն ամենայն սիրով շնորհակալութիւն յայանեց Թուսինեան էֆ. ին աշխատութեան համար, եւ Թուսինեան էֆ. խօսք առնելով բեմին ելաւ:

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. ԷՖէնտիններ.

Այդ շնորհակալութեան քրէն՝ որով իսպատուել կը բարեհաճիք, տէր ունի, իրաւունքի տէրեր. չեմ կրնար՝ որքան ալ պանծալի ըլլայ ինծի համար՝ չեմ կրնար՝ զանի յափշտակել ու յիս մէնագրաւել. ներեցէք որ բաշխեմ:

Առաջինը՝ այդ իրաւանց տէր՝ այն մտերիմ բարեկամն է որ առ ժամայն ի Բարիդ, եւ որ շատ աշխատասօք, շատ գծուարութեամբ՝ հաւատացէք՝ տաժանելի եւ ընդ երկար երթեւեկներով հետամտա, իբրեւ ազգին ծառայութիւն՝ բան դործ ըրած իրեն, ձեռք բերած է վերջապէս, կորդած է կրնամ ըսել ունեցողի մը ձեռքէն այդ կանոնադրութեան սպառեալ օրինակներէն մէկ հատը՝ զոր տարիներէ ՚ի վեր կը բնտրուէինք, Այն բարեկամը կ'ըսեմ՝ ոչ իմ առանձին, այլ ազգին բարեկամը, որոյ հայրենասիրական եռանդէն զո՛ր չը կայ որ չը կարենայ սպասել եւ ընդունել ընդհանուրին օգուտը. Այն կարճ տեղեկութեամբ անուանեցի զըրթէ, եւ այն սիրելի անունը ամենուր լեզուին վրայ է արդէն:

Չարմանալի դուզադէպ. կենսական խնդիր մը՝ Սահմանադրութիւն մը կուզայ Ազգին, սկիզբը անուն մը կայ՝ համեստօրէն պահված՝ Նիկողոս Պալեան. . . Ո՛չ նուազ կարեւոր խնդիր մը՝ կանոնադրութիւն մը կուզայ ժողովին, սկիզբը դարձեալ անուն մը կայ՝ նրմանօրինակ սքօղեալ՝ Յակոբ Պալեան:

Չեր քրէն մէկ մասը՝ Երեսփոխան էֆէնտիններ, առաջին մասը՝ այս իրաւունքին տիրողը կը պարտիմ յղել, եւ կը յուսամ՝ թէ ո՛չ միայն արդար կը դատի ժողովը, այլ կ'արտօնէ՝ զիս յանուն իւր եւ ի պաշտօնէ յղել զայն անոր:

Չեր շնորհակալութեան երկրորդ եւ մեծ բաժինը՝ էֆէնտիններ, մեր Նախագահ Սրբազանին իրաւունքն է, իբրեւ նախաձեռն. հոս ալ կը միանաք ինծի հետ, գիտեմ: Այն կորովամիտ եւ հեռատես գիտօղին, որ կարեւորութիւնը թափանցելով՝ խնդրեց մենէ ստիպող կերպով այդ կանոնադրութեան խմբագրութիւնը. իւր շնորհալի խնդիրքը հրաման էր մեզի եւ պատիւ: Ճիշդ զգացմամբ, ազդու այլաբանութեամբ կը նկատէր զայս ժողովն առանց կարգի ու կանոնի իբրեւ նաւ անդեկ, անկողմնացոյց, մղեալ ըստ բազմին ալեաց յալիս եւ խաղալիկ ներհակ հողմոց: Համոզեալ էր թէ ժողովին ձգուեցն ամուլ էին զի ժողովը չէր գիտէր ո՛ր կողմէն բռնելու էր խնդիր մը եւ ո՛ր ճամբէն կրնար հասնիլ անոր լուծման: Այո՛, ասի այսպէս եղաւ, կրնանք մի ուրանալ: Ութ տարի կայ՝ Հաճախեալ խնդիր մ'երեւցաւ ՚ի հորիզոն, եւ ընդ երկար տատանելէն ետքը՝ ընկղմեցաւ, յանդուհոյ գտաւ զիւր լուծումը: Անկէ ետքը՝ վերջին խնդիր մը փայլեցաւ, վեց տարի շարունակ ծիփծիփալով՝ յուզեց, վարսեց, տանջեց ըզժողովը, վերջապէս ալեկոծեալ՝ աս ալ իւր անդրանկին բախտին հանդիպեցաւ: Նոյնպէս եւ այլ շատ խնդիրներ, թէպէտ նուազ կարեւոր:

Իրաց այդ աւաղելի վիճակէն յուսալի էր արդեօք երանելի հետեւանք. — Ո՛չ: Բայց հոգատարութեամբ մը արեւտից ճար չըլլար: Արդ՝ այդ արեւտալի վիճակին հոգ տարաւ սրտի մըտօք, դարման բերաւ մեր Նախագահը:

Իւր համեստութիւնը ներէ թող ինծի որ իրեն ուղղեմ խօսքս եւ ըսեմ իրեն սա բեմին բարձրէն. «Արդ այդ գժբաղղ նաւը, ո՛ր Սրբազան նաւապետ, ձեր ձեռքէն կ'ընդունի այսօր իր զեկը՝ ձեր ձեռքով կը կանգնի ազգային բեմը: Հայոց ժողովն երկու դէմք՝ երկու թվական պիտի ունենայ. մէկը՝ անկանոնութեան ու անիշխանութեան՝ անցեալին դարձած, միւսը՝ բարեկարգութեան ու կանոնաւորութեան՝ ապագային յառեալ: Այս նոր թվականը՝ ձեր ակնարկալութեան թվականն է. սկիզբ կ'առնու:

նու այսօր կանոնադրութեան հաստատութեանէն, որոյ փրկարար արգասին բաւական է Պատրիարքութեան մը փառքին, բաւական է զազգն ընդհանուր երախտագարտ ընելու: Այո՛, կ'երանեմ ըզ ձեզ Բարձրաշնորհ, այդ փառաւոր ճակատագրին համար՝ զոր շատեր պիտի շնորհաւորեն: Ես իբրեւ երեսփոխան իմ մասին՝ յանուն ընտրողացս գո՛նէ շնորհակալ եմ Ձեր Սրբազնութենէն, եւ քաջ գիտեմ որ անձիւր երեսփոխան ձայնակից է հոս ինծի»:

Կուգամ, էֆէնտիններ, ձեր՝ այդ քրէն երրորդ եւ վերջին՝ բայց ամենէն արդիւնաւոր եւ պատուաբեր մասին, որ թէպէտ իս կը թափանցէ սրտագին, բայց ձերն է, ձեզ կը վերջնծայեմ, զի ձեզի կը պատկանի օրինաց ու ժով. Ի՛նչ է ժողովին առջեւ դրական աշխատութիւն մը եթէ արդիւնք չ'ունենայ. ի՛նչ է տառը եթէ ողի չ'ունենայ. արդ այն աշխատութիւնը դուք արդիւնաւորեցիք, այն տառերուն ողի դուք տուիք ձեր քրէնովը: Կանոնադրութեան յօդուտ ազգին ձեր միտձայն ընդունելութիւնը ձեզի պատիւ կընէ եւ ձեր ներկայացուցած ժողովուրդին. ուստի ձերն է դարձեալ բոլոր փառքն ու պատիւը: Իսկ ես, ինչ ըրի, պարտաւորութիւն մըն էր կատարեցի, երեսփոխանական պարտքս էր որ վճարեցի. եւ դուք զայս պարտքս վճարած ըլլալս արդարութեամբ ճանաչեցիք ու ձեր շնորհակալութեան քրէնովը հաւաստել հաստատել ուզեցիք ճանաչելիք: Ահա այսպէս կրնամ ըմբռնել այդ քրէն նշանակութիւնը, եւ պարտքի մը վճարման համար շնորհակալութեան չեմ տեսներ տեղի: Հապա ի՛նչ կը մնայ ինծի այդ քրէնէն. այո՛, գոհացուցիչ բաժին մը կը մընայ, բերկրալի եւ սոսկ հոգեբանական բաժին մը, այն է՝ պարտքի մը վճարման մէջ պարկեշտ խիղճերու զգացած հոգեզուարճ հեշտութիւնը. եւ այս բարոյական բերկրութեան համար՝ զոր կ'ընձեռէ ինձ ձեր պատուաղիր քրէն, երեսփոխան էֆէնտիններ, ես կը մնամ ձեզի շնորհապարտ, ձեզի՛ որ քան՝ զարժանն յարգ ընծայելով իմ տկար աշխատութեանս՝ զանի՛ դօրացուցիք: Ուստի կ'աղաչեմ որ իմ շնորհակալութիւնս ընդունի Ազգային ժողովը, իմ խորին շնորհակալութիւնս:

Ընկողմնացի էֆէնտիններ. բայց չեմ կրնար իջնիլ այս բեմէն որոյ պատուանդանի վրայ ես

առաջինն ոտ դնելու պատիւն ունիմ, առանց կարճ բառ մ'ալ այս առթիվ ըսելու, առանց սրբազան պարտք մ'ալ վճարելու:

Կը ցանկամ նախ այս առթիվ վերանորոգել սրտերու մէջ այն երախտագարտ զգացումը՝ զոր կը կրենք աղբովին այն վե՛ր բարեբաբին համար՝ որոյ հայրախնամ շնորհօյն ու հըզօր հովանւոյն տակ կը վայելենք շատուց Սահմանադրութիւն մը եւ այսօր սա Բեմը: Ազգային ժողովին սրբազան պարտքն է իւր Օգոստոսփառ Վեհապետին երկար եւ երջանիկ կեանք մաղթել. եւ անոր կառավարութեան լուսաւորութեան շաւղին մէջ յարատեւ յուսալաղիմութիւն:

Կը ցանկամ երկրորդ՝ մէկ բառով ըսել թէ ի՛նչ է այս բեմը, եւ ի՛նչ նշանակութիւն ունի մեզի համար բեմական ըսված ազատութիւնը: Ահա պարզ սեղան մը ձեռքիդ տակ՝ հասարակ փայտէ շինված, եւ ոտքիդ տակ՝ երկու աստիճանով բարձրացած նեղ պատուանդան մը, բայց խիստ բարձր է գիրքը, շատ ընդարձակ է նշանակութիւնը: Բեմը՝ համատարած հրապարակ մըն է, ազգային այն բարձր հրապարակը, ուրկէ ազգին հետ, աշխարհի հետ կը խօսվի. հոն ելլողը՝ աշխարհք՝ զանի կը տեսնէ. հոնկէ ընկած բառը՝ աշխարհք՝ զանի կը լսէ ու կը դատէ: Ո՛րքան ուրեմն պատկառանք պէտք է ելլիլ հոն. որքան ուրեմն խրնամով ուսուցմասիրեալ, չսփեալ, կշտեալ պարտ է ըլլան հոնկէ արտասանված խօսքերը: Երեսփոխանի մը խօսելու ազատութիւնը անբանաբարելի է, այո՛, բայց իր ձեռնհասութեան սահմանին մէջ. եւ ինչպէս ամեն ազատութիւն՝ աս ալ ունի իր սահմանը, ուրկէ դուրս զեղծում է, չէ՛ ազատութիւն՝ այլ սպերաստութիւն, որ եպիբեղի է ամեն ուրեք եւ ձաղկելի ըստ ամենայն օրինաց աշխարհի: Մեր բեմական ազատութեան սահմանը՝ մեր ներքին գործերն են, մեր ազգային հաստատութիւնքը եկեղեցի, դպրոց, վանք եւ կարօտելոց ձեռնտուութիւն: Ասոնց մէջ պարփակեալ է մեր խօսելու ազատութիւնը. նաեւ ասոնց մէջ հաստատելու սոսկ ազգային օրէնքնիս՝ կայսերական ընդհանուր օրինաց պէտք է որ չը հակառակին: Մինչեւ հոս է անհամար ձեռնհասութեան սահմանը:

Ուստի պարտ է մեզ խոհեմութեամբ ըզգուշանալ, սահմաննիս ու չսփեմնիս ճանաչել, եւ բարեխնամ Տէրութեան վստահութիւն

ընդ միշտ վայելելու համար՝ մեր զլինելն վեր խնդիրներու յանդգնութեամբ չը նախաձեռնել . մէկ խօսքով չը շեղիլ սա համոզումն թէ՛ Տէրութեան շահերը Ազգինն են եւ Ազգինները Տէրութեան :

Վերջապէս էֆէնտիներ , որովհետեւ այս բանին վրայէն ազգին հետ կրնայ խօսվիլ , ես կը շնորհաւորեմ Ազգին իւր նորակառոյց այս բանը , եւ իրեն ազատամիտ եւ իմաստուն պերճաբաններ մաղթելով՝ կ'աւարտեմ խօսքս :

ԿԻՒՄԻՏԻՎԻԵՐՏԱՆ Ռ. ԷՖ. ԵՆ ԱՅԼԻՔ . կեցցէ՛ Ռուսինեան էֆ .

Մայր դիւանին ընտրութեան ձեռնարկելէ յառաջ Ատենապետ էֆ. կը ծանուցանէ թէ՛ Ղրւանին վրայ բաւական զրեւ կան ժողովոյն ներկայանալի , որոնցմէ ոմանք ըստ նոր կանոնադրի նախաքննիչ դիւանաց յղուելու կարօտ են , եւ թէ՛ Ղրւանը զանոնք նախաքննիչ դիւանաց կազմութենէն հոսքի թողլով մնացեալները պիտի ներկայացնէ ժողովին :

Ատենադպիր էֆ. կը կարդայ հետեւեալ զրեւը .

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Յաւ է ինձ յայտնել Ձեր բարձր Սրբազնութեան որ անձնական գործերով չափազանց զբաղմամբս անկարելի է ինձ այսուհետեւ իմ Երեսփոխանական պարտաւորութիւնս կատարել , ուստի սոյն հրաժարագիրս ընդունելիդ խնդրելով .

Մնամ

Ձեր բարձր Սրբազնութեան ամենախոնարհ օրդի Գ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Կ. Պօլս 14 Հոկ. 1874 .

Ամենապատիւ Տէր Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոս . Պատր. Հայոց Կ. Պօլսոյ .

Սրբազան Հայր .

Ձեր Սրբազնութեան հրաւերին անձնովին պատասխանել կարող չեմ՝ յազաջիկայ Ընդհ. ժողովոյ նստին ներկայ գտնուելով . քրտութեամբ հրաժարուելն էլ ժողովէն օրինաւոր չէ եղել , այլ ինչպէ՛ս , ուրեմն խնդրեմ խոնարհա-

բար որ Ձեր Սրբազնութիւնը այս գրով մեզ քրտութեամբ կերպով հրաժարուած համարի Ազգ. Ընդհ. ժողովոյ երեսփոխանութենէն .

Մնամ ձեր Սրբազնութեան Ամենախոնարհ ծառայ .

Խոնարհ ՄԱՐԿՈՍ ԱՂԱՐԷԳԵԱՆ 1874 Հոկ. 17

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Երեսփ. ժողովոյ .

Ներկայիւս կը հրաժարիմ այսօրու ընէ երեսփոխանական պաշտօնէս իմ յօժար կամօքս , եւ կը խնդրեմ որ բարեհաճիք ընդունիլ ու հաղորդել երեսփոխանական պատկառելի ժողովոյն :

Մնամ ձերու բարձր Սրբազնութեան Ամենախոնարհ ծառայ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Չ Օգոստոս 1874 Սամաթիա

Ամենապատիւ Սրբազան Հայր , Նախագահ Ազգային Ընդհ. ժողովոյ .

Անձնական զբաղումներս չը ներելով ինձ հարկ եղած ճշտութեամբ կատարել Ազգային Ընդհ. ժողովոյ Գ. ատենադպրի պաշտօնս , ըստիպուած եմ առ Սրբազնութիւնդ ներկայացընել իմ հրաժարականս : Այս որոշումս ըրած ատենս անոր համար աւելի կը ցաւիմ , Սրբազան Հայր , որ համոզուած եմ թէ՛ Ձեր Սրբազնութեան Պատրիարքութեան օրով ամէն ազգային պաշտօնեայ ոչ միայն միջոց ունի օգտակար ըլլալու ազգին , այլ նաեւ մասնաւոր հաճոյք մը պէտք է զգայ Սրբազնութեանդ հովանոյն տակ ծառայելով :

Մնամ ամենախոնարհ յարգանք Սրբազնութեանդ .

Խոնարհ եւ անձնուէր ծառայ Թ. ԹԷՐԻԱՆ

Բերա

29 Օգոստ. 1874

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Երէկու ընէ ի վեր պատահած անձնական եւ ստիպողական գործ մը չը պիտի ներէ , բաղձանացս հակառակ , այսօրուան Ընդհանուր ժողովոյն ներկայ գտնուիլ , որոյ վասն փութացայ Վսեմախալ Ատենապետ Սարգիս Աղաբէկեան էֆէնտիին իմաց տալ ըստ կանոնադրութեան :

կը ցաւիմ որ անցեալ նիստի ատենադրութիւնը մինչեւ ցարդ ձեռքս չը հաստ , թէեւ երկու անգամ դիւանատունէն խնդրեցի , ըստ սովորութեան աչքէ անցնելու համար յառաջ քան զպայագրութիւն :

Թէ որ ժամանակին ձեռքս հասնէր , մինչեւ ցարդ Մեծապատիւ Երեսփոխան էֆէնտիները տպագրեալը կարդացած կըլլային եւ հետեւաբար ամէնքը յիշեալ նիստին եղելութեանցը վրայ ճիշդ անդեկութիւն կատանային : Խնդրեմ որ բարեհաճիք , Սրբազան Հայր , ներկայ նամակս պատկառելի ժողովոյն հաղորդել եւ միանգամայն ընդունել անձնուէր ըզգացմանցս նուէրը որով մնամ

Ձեր Վեհ Սրբազնութեան Իւսկիւտար Ամենախոնարհ ծառայ Ուրբաթ առաւօտ ԳԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ 18 Հոկտեմբեր 1874

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Գիտէ ժողովն որ երկու պատճառաբանեալ հրաժարականներ ալ կային , մէկը Տատեան Առաքել Սիսակ պէյէն եւ միւսն Այվազեան Աբրահամ էֆ. էն : Այս վերջինն որոյ հրաժարագիրը յուլիս 5 ի նստին մէջ կարդացուած է , նոյն օրը Նախագահ Աբրահամին հրաւիրագրին պատասխանած է թէեւ , բայց նամակն Ատենը գոցուելէն հոսքը հասնելուն համար ժողովին չէ ներկայացուած : Իմա կը կարդանք զայն : Կը մնայ Տատեան Առաքել Պէյինը միայն , որ կարդացուած չէ : Աւասիկ Այվազեան էֆ. ի նամակը :

Ամենապատիւ Սրբազան Հայր .

28 Յունիս ամսաթուով Ձեր բարձր Սրբազնութեան գրած հրաւերը ընդունեցի :

Ընդունելէ սրտագին , Ձեզ նկատմամբ ունեցած համարմանս համար , յուսալով որ Երեսփոխանական անկուպար վիճակը Ձեր շնորհիւ նոր ուղղութիւն մը կ'ստանայ :

Դժբախտաբար այսօր անձնական տկարութեանս պատճառաւ չպիտի կրնամ անձամբ պատասխանել Ձեր հրաւերին :

Մնամ ձեր ամենախոնարհ ակնածութեամբ

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

5 Յուլիս 1874 Ի Գանատիւ

ԻԹԻԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Այդ գրութեամբ

ուրեմն Այվազեան էֆ. իր պատճառաբանեալ հրաժարագիրը յետս կոչած կ'ըլլայ :

Գիւսանն անմիջապէս քուէի կը զնէ Գարալէօզեան Գրիգոր , Աղաբէկեան Մարկոս եւ Խօճատարեան Օդոնէն էֆէնտիներուն հրաժարականները , եւ ժողովը միաձայն հաւանութեամբ կ'ընդունի :

ՊէկեԱՆ Թ. ԷՖ. — (Խօսքը Գէկեան էֆ. ի)

Երեսփոխանաց հրաժարականն ընդունել կամ մերժել մեծամասնութեան գործն է , մինչեւ Սահմանադրութեան հակառակ քուէի կը զնէք այժմ : Ի սկզբան ալ այնպէս վարուեցաք ատենադրութեան ընդունելութեան մասին : Կը ցաւիմ որ ժողովն այս օրու ընէ կ'սկսի իւր ներքին կանոնաց հակառակ վարուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ խնդրոյ մի վերադառնաք , Պէկեան էֆ .

ՊէկեԱՆ Թ. ԷՖ. — Նոյն իսկ խնդրոյն վերայ կը խօսիմ . անցեալ նիստին կանոնադրութիւնն ընդունուած ատեն պայման ալ դրուեցաւ որ կանոնագրին Սահմանադրութեան հակառակ երեսոցող կէտերը վերաքննուելէ ետեւ գործադրին : Բայց այսօր այդ որոշման հակառակ վարուեցաւ դիւանը , նոյն իսկ Ատենապետի ընտրութիւնն ալ ապօրինաւոր էր , վաստն զի ըստ Սահմանադրութեան երկրցագոյնին անկ է վարել առօրեայ Ատենապետութեան պաշտօնը , մինչդեռ կրտսերագոյնը կոչուեցաւ այդ պաշտօնին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Խօսքը Պէկեան էֆ. ի ուղղելով) Ձեր գիտողութիւններն ամբողջ պիտի արձանագրուին . կազաչեմ , վստահ եղիք այս մասին եւ խօսքերնուդ վերջ տուէք :

Ատենապետ էֆէնտի քուէի կը զնէ Թէրլան Թաղէոս էֆ. ի Գ. ատենադպրութեան պաշտօնէ հրաժարականն ալ , զոր ժողովը միաձայն հաւանութեամբ կ'ընդունի : Եւ կը պատրաստուի Մայր դիւանի ամբողջացման խնդրոյն անցնիլ :

ԻՓԷԻՃԵԱՆ Զ. ԷՖ. — Կանոնական դիտողութեան մը համար խօսք ուղեցի : ժողովին մատուցուած որեւէ թղթերը պէտք է կարդացուին կանոնադրութեան 19րդ յօդուածին

համեմատ, որ կը տրամադրէ թէ « ատենագրութեան ընդունելութենէն ետքը՝ օրակարգին չանցած՝ Ատենապետը կը հաղորդէ ժողովին անոր վերաբերեալ թուղթերը, եւ ժողովը՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ յղումները կարտասանէ » : Ըսիք թէ նախաքննիչ զիւանները տակաւին կազմուած չեն, բայց ատի արգելք մը չէ թղթերը կարգացուելուն. թող կարգացուին. յղումներն անմիջապէս արտասանելու հարկ չկայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ մասին Դիւանը կը կարծէ թէ աւելորդ եւ անօգուտ աշխատութիւն մ'է այդ, վասն զի թղթերը չպիտի կրնան այժմէն յողով առ որ անկ է, եւ նախաքննիչ զիւանաց կազմութենէն ետքը ժողովը նորէն պիտի զբաղի այդ խնդրով. բայց քանի որ կը պնդէ ժողովին կամքը պէտք է հարցնեմ :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Կանոնին տրամադրութիւնն ինչո՞ւ քուէի կը դնէք :

Ատենապետ էֆ. կը հարցնէ ժողովին թէ յղման կարօտ եղող թղթերուն ընթերցումը նախաքննիչ զիւանաց կազմութենէն ետքի թողով օրակարգին անցնիլ կուզէ թէ ի վէկեան էֆ. ի առաջարկութեան համեմատ անոնց ընթերցումն այժմէն լսել կուզէ :

Ժողովը ձեռամբարձ քուէով օրակարգին անցնիլ կորոշէ :

ԱՄԲՈՂՋԱՏՈՒՄ ՄԱՅՐ ԴԻՍԱՆԻՆ

Դիւանը ժողովին կամքը կը հարցնէ նախապէս իմանալու համար թէ կանոնագրին 49 դ յօդուածոյն համեմատ որոշող ձայնից միաբանութիւնը հաւանական կարծելով քուէարկութեան ձեռնարկել կուզէ :

Ժողովը կորոշէ ձեռնարկել քուէարկութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին պակաս անդամներն են Բ. Ատենապետ եւ Գ. Ատենադպիրը, որոց տեղ նոր ընտրութիւն պիտի լինի. բայց կանոնագրին 5 դ յօդուածոյն համաձայն Գ. Ատենապետն՝ որ է Վսեմ. Սարգիս էֆ. Աղաբէկեան, Բ. Ատենապետի տեղ կանցնի. ուստի եւ ընտրութիւնը Գ. Ատենապետի եւ Գ.

Ատենադպրի համար հարկ է կատարել : Կը հըրաւիրեմ զերեսօխոսանս որ իրենց քուէները պատրաստեն, յիշեցնելով որ կանոնագրութեան 47 դ յօդուածոյ տրամադրութեամբ Մայր զիւանի անդամոց ընտրութիւնը անցանկ կը կատարուին :

Դիւանին կողմէն քննիչ կը ցուցուին .
Ներսէս վարդապետ Աւանեան
Յովհաննէս քահանայ Մկրեան
Ռուբէն էֆէնտի Կիւմրիկէրտան
Սիմոն » Միքայէլեան

ԻԻԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պահ մ'առաջ խընդիր ծագեցաւ թէ առանց մեծամասնութեան ատենագրութիւնը քուէի դրուեցաւ. հիմա Մայր զիւանի ամբողջացման համար քուէարկութիւն պիտի կատարուի, միթէ այս ալ առանց մեծամասնութեան պիտի ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ կանոնագրին իսկական մեծամասնութիւն ունի արդէն ժողովը :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Նորէն կը յիշեցնեմ որ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (ԵՒՊԷԷԷԷ) Ձեր դատողութիւնն արդէն արձանագրուեցաւ. աւելորդ է կրկնել :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քանի որ ատենական կանոնագրին դեռ եւս լաւ տեղեակ չենք ամենքս, անոր յօդուածները կատարելապէս սերտած չըլլալով, եւ քանի որ այդ պատճառաւ անհամաձայնութիւններ կը ծագին մեր մէջ, ես կատաշարկեմ որ անոր հեղինակը՝ Ռուսինեան էֆ. որ բնականաբար ամենէն լաւ գիտէ անոր տրամադրութեանց ուժը, բարեհաճի անմիջապէս խօսք առնուլ եւ մեկնաբանել երբ դժուարութիւն մը կը ծագի :

Երեսօխոսանք ոմանք կը կրկնեն այս առաջարկութիւնը :

Ռուսինեան էֆ. կը յայտնէ թէ Դիւանին վարմունքը՝ կանոնագրին տրամադրութեանց հակառակ չէ :

Քուէարկութիւնը կը սկսի, եւ երեսօխոսանք յանուանէ կը հրաւիրուին մի առ մի քուէ տալու :

ՊԵԿԵԱՆ ԷՖ. — (Քուէ շուր շուր թէ) Ազգ. Սահմանադրութեան, միանգամայն նախորդ նիստով տրուած պայմանաւոր որոշման համեմատ ժողովը մեծադոյն մաս չունենալուն համար, չեմ կրնար մասնակցիլ քուէարկութեան :

Քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքը կունենայ :

Թիւ քուէարկուաց 36 .

Ռուսինեան էֆ. քուէից բացարձակ առաւելութեամբ, այսինքն 23 քուէով Գ. ատենապետ կընտրուի :

Իսկ Գ. Ատենադպրի համար բացարձակ առաւելութիւն չգոյանալով, եւ առաւելագոյն քուէ ստացողներէն Պէկեան եւ Ալաճաճեան էֆէնտիներուն վրայ երկրորդ քուէարկութիւն կատարուելով, այս անգամ 34 երեսօխոսանք քուէարկութեան կը մասնակցին, եւ 14 քուէի դէմ 20 քուէով Ալաճաճեան էֆ. Գ. Ատենադպիր կընտրուի :

Ատենապետ էֆ. կը յայտնէ թէ թէպէտ օրակարգին համաձայն նախաքննիչ զիւանաց կազմութեանը պէտք է ձեռնարկել. սակայն ժողովին փակման ժամը հասած ըլլալուն համար այսօր այդ ընտրութիւնը կատարել կարելի չըլլալով ըստ կանոնագրին հարկ կը լինի Յ օրէն ժողովը նորէն գումարել նախաքննիչ զիւանաց ընտրութիւնը կատարելու համար : Եւ կը հրաւիրէ զատենադպիր էֆ, երրորդ բացակայութեանց ցուցակը ներկայել ժողովոյն :

Ատենադպիր էֆ. երրորդ բացակայութիւնը լրացողաց ցուցակը ներկայացնելով՝ կը յայտնէ թէ նախընթաց նիստէն ետեւ վերջին ազգադիր զրկուած է, եւ հինգ հոգի դարձեալ չեն ներկայացեր, ոչ ալ իրենց բացակայութեան օրինաւոր պատճառը ծանուցանելու համար նամակ զրկեր են :

Ահաւասիկ յիշեալ հինգ երեսօխոսանաց անունները :

Սարգիս էֆէնտի Աղաբէկեան	»	Պոյաճեան
Յովհաննէս	»	Այվատեան
Մեսրոպ	»	Խօրասանճեան
Ալիքսան	»	Պէտեան
Կարապետ	»	

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես համամիտ եմ ի սկզբանէ ՚ի վեր եւ մինչեւ վերջն այն որոշման՝ զոր Ընդհ. ժողովն ասկէ առաջ ըրած էր թէ երեք անգամ յաջորդական բացակայութիւն ունեցող երեսօխոսանք հրաժարեալ համարուին. բայց որովհետեւ կրնայ պատահիլ որ այդ կարգի երեսօխոսանաց գրուած վերջին ազգադիրն իրենց ձեռքը չհասնի. ինչպէս որ այս անգամ ինձ ալ այդպիսի ազգադիր մը կար, որ երեկ իրիկուն ձեռքս հասաւ, եւ եթէ զիպուածով մը տուն չերթայի, չ'պիտի կրնայի ստանալ. ուստի պէտք է որ իրենց ձեռք հասած լինելուն ապահովագիր առնուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Գէշ օրինակ մը կրնայ ըլլալ այդ, ուստի չեմ կրնար ընդունիլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Թ. ԷՖ. — Ես ալ երեկ իրիկուն կրցայ առնուլ ինձ զրկուած վերջին ազգադիրը :

Վերջին ազգադրոց համար ապահովագիր առնուելու կարծիքն ուրիշ երեսօխոսանաց կողմէ ալ կրկնուելով զիւանը կը պարտաւորի ժողովին կամքը հարցնել, եւ կ'որոշուի այս անգամին համար բացառութիւն ընելով անգամ մ'ալ ազգադիր զրկել յիշեալ երեսօխոսանաց. եւ այսուհետեւ ապահովութեան միջոցներ ձեռք առնուլ :

Ժողովն որոշեց յաջորդ նիստն ութ օրէն ընել, եւ օրակարգ սահմանել հետեւեալ խընդիրները .

1. Ընդունելութիւն նախընթաց նիստի ատենագրութեան .
2. Վաւերացումնորընտիր երեսօխոսանաց .
3. Կազմութիւն նախաքննիչ զիւանաց .
4. Ամբողջացում Քաղաքական ժողովոյ : Ժամը 10 ին ատենը գոցուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ Բ. Գ. Գ. ՓԱՅԱՅԵԱՆՏ Թ. Ա. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ




<p>1871</p> <p>Jan 1</p> <p>Feb 1</p> <p>Mar 1</p> <p>Apr 1</p> <p>May 1</p> <p>Jun 1</p> <p>Jul 1</p> <p>Aug 1</p> <p>Sep 1</p> <p>Oct 1</p> <p>Nov 1</p> <p>Dec 1</p>	<p>Balance</p> <p>Income</p> <p>Expenses</p> <p>Profit</p> <p>Total</p>
---	---

Account of the year 1871

and

of the year 1872



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ճախոշի ի Դիշանաւասն Պատրիարքարանի , և կը գտնուշի
Եկեղեցեաց բանկալները :